Հավելված N 1
ՀՀ կառավարության 2015 թվականի
հոկտեմբերի 1-ի N - Ն որոշման

I. «ԷՐԵԲՈՒՆԻ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. «Էրեբունի» պետական արգելոցը գտնվում է մերձարաքսյան ծալքավոր լեռնաշղթաների լանջերում, Երևան քաղաքի հարավ-արևելյան կողմում՝ Մուշավան և Գեղադիր գյուղերի միջև ընկած հատվածում: «Էրեբունի» պետական արգելոցի ընդհանուր մակերեսը 118.75 հեկտար է:

2. «Էրեբունի» պետական արգելոցի տարածքը հյուսիս-արևմուտքից և արևելքից «Ա»-«Բ» հատվածով սահմանակից է Ողջաբերդի գյուղական համայնքին, հարավից և հարավ-արևմուտքից «Բ»-«Ա» հատվածով՝ Երևան քաղաքին:

II.«ԷՐԵԲՈՒՆԻ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ - ՈՂՋԱԲԵՐԴԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ «Ա»-«Բ» ՍԱՀՄԱՆԱԳԻԾ

3. Արգելոցի, Ողջաբերդի գյուղական համայնքի և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետից, որի կոորդինատներն են՝ (x=44446174.3487, y=8466116.4661)՝ սահմանագիծը թեքվում է դեպի հյուսիս-արևելք, թիվ 1-3 սահմանակետերով անցնում 414 մ՝ հասնում թիվ 4 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ (x=4446491.8476, y=8466365.9704): Թիվ 4 սահմանակետից սահմանագիծը նորից թեքվում է հյուսիս-արևելք, թիվ 5-7 սահմանակետերով անցնում 379 մ՝ հասնում թիվ 8 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ (x=4446627.7683,y=8466718.6016), այնուհետև սահմանագիծը ջրբաժանով թեքվում է հյուսիս-արևելք՝ թիվ 9-16 սահմանակետերով անցնում 467 մ՝ հասնում թիվ 17 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ (x=4446849.0018, y=8467113.2367): Թիվ 17 սահ-

մանակետից սահմանագիծը կտրուկ թեքվում է դեպի հարավ՝ թիվ 18 սահմանակետով անցնում 292 մ՝ հասնում ձորի մեջ գտնվող թիվ 19 սահմանակետին, որի կոորդի-նատներն են՝ (x=4446572.1785, y=8467202.8105), որից հետո լանջով թեքվում է հարավ-արևելք՝ թիվ 20-28 սահմանակետերով անցնում 840 մ՝ հասնում թիվ 29 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ (x=4446100.7423, y=8467882.2557): Թիվ 29 սահմանակետից սահմանագիծը թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հարավ-արևմուտք՝ թիվ 30 սահմանակետով անցնում 449 մ՝ հասնում առվի եզրին գտնվող թիվ 31 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ (x=4445688.2217, y=8467732.2227), ապա հատելով առուն՝ հորի-զոնականների ուղղությամբ թեքվում է հարավ՝ անցնում 90 մ՝ հասնում Արգելոցի, Ողջա-բերդի գյուղական համայնքի և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Բ» հանգու-ցային սահմանակետին, որի կոորդինատներն են՝ (x=4445597.5324, y=8467732.1231):

4. «Ա»-«Բ» սահմանագծի ընդհանուր երկարությունը 2931 մ է:

III. «ԷՐԵԲՈՒՆԻ» ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼՈՑ-Ք.ԵՐԵՎԱՆ «Բ»-«Ա» ՍԱՀՄԱՆԱԳԻԾ

5. Արգելոցի, Ողջաբերդի գյուղական համայնքի և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Բ» հանգուցային սահմանակետից սահմանագիծը լանջով թեքվում է դեպի արևմուտք՝ թիվ 1-3 սահմանակետերով անցնում 281 մ՝ հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 4 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ (x=4445651.5506, y=8467464.2250), այնուհետև դաշտային ճանապարհին զուգահեռ թեքվում է կրկին դեպի արևմուտք՝ թիվ 5-8 սահմանակետերով անցնում 362 մ՝ հասնում դաշտային ճանապարհի եզրին գտնվող թիվ 9 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ (x=4445708.9582, y=8467110.8587): Թիվ 9 սահմանակետից սահմանագիծը զուգահեռ դաշտային ճանա-պարհով, ձորով՝ թեքվում է դեպի արևմուտք, թիվ 10-14 սահմանակետերով անցնում 534 մ՝

հասնում թիվ 15 սահմանակետին, որի կոորդնատներն են՝ (x=4445936.7189, y=8466638.0729): Թիվ 15 սահմանակետից՝ սահմանագիծը դաշտային ճանապարհով թեքվում է դեպի հարավ-արևմուտք, ապա հյուսիս-արևմուտք՝ թիվ 16-21 սահմանա-կետերով անցնում 536 մ՝ հասնում թիվ 22 սահմանակետին, որի կոորդինատներն են՝ (x=4446092.8234, y= 8466151.5370), որտեղից թեքվում է դեպի հյուսիս՝ հատելով առուն՝ անցնում 89 մ՝ հասնում Արգելոցի, Ողջաբերդի գյուղական համայնքի և Երևան քաղաքի տարածքների բաժանման «Ա» հանգուցային սահմանակետին:

6. «Բ»-«Ա» սահմանագծի ընդհանուր երկարությունը 1802 մ է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԻ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ